ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի նախարարության և Կանադայի տրանսպորտի դեպարտամենտի միջև տրանսպորտի բնագավառում տեխնիկական փորձի փոխանակման և համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի նախարարությունը և Կանադայի տրանսպորտի դեպարտամենտը, այսուհետ՝ Կողմեր,

ցանկանալով զարգացնել տրանսպորտի բնագավառում տեխնիկական համագործակցությունը այնպիսի գործողությունների միջոցով, որոնք կարող են ներառել ռազմավարական և տեխնիկական բնույթի խորհրդատվություն, սեմինարների և համաժողովների անցկացում, ինչպես նաև տրանսպորտի բոլոր երեք տեսակի միջոցների /օդային, ծովային, ցամաքային/ բնագավառներում վերապատրաստման կազմակերպում և զարգացման ապահովում,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1
Նպատակը

Սույն Փոխըմբռնման հուշագիրը նպատակ է հետապնդում ծախսերի փոխհատուցման սկզբունքով նպաստել օդային, ծովային և ցամաքային տրանսպորտի բնագավառներում տեխնիկական համագործակցության զարգացմանը:

Հոդված 2
Տեխնիկական համագործակցություն

Տեխնիկական համագործակցությունը կիրագործվի շահագործման և կառավարման բնագավառներում և կներառի հատուկ համաձայնագրեր՝ նպատակաուղղված տեխնիկական խորհրդատվության, տեսական և գործնական ուսուցման, սեմինարների և դասընթացների կազմակերպման օդային, ծովային և ցամաքային տրանսպորտի որոշակի բնագավառներում՝ նոր տեխնոլոգիաների և միջոցների կիրառման միջոցով: Սույն գործողությունները կարող են նախաձեռնվել կամ Հայաստանում, կամ Կանադայում՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 3
Կիրառման շրջանակները

ա) Կողմերից յուրաքանչյուրը կնշանակի պատասխանատու անձանց, որոնք այսուհետ կսահմանեն հետագա համագործակցության բնագավառները:

բ) Հնարավոր համագործակցության բնագավառները սահմանելիս պատասխանատու անձինք կհաղորդակցվեն միմյանց հետ հնարավորության սահմաններում էլեկտրոնային կապի միջոցներով:

գ) Համագործակցությունը կարող է ներառել ռազմավարական և տեխնիկական բնույթի խորհրդատվություն, սեմինարների և համաժողովների անցկացում, ինչպես նաև վերապատրաստում տրանսպորտի բնագավառը համակարգող քաղաքականության և կանոնակարգման ոլորտներում:

դ) Կողմերը կբանակցեն միմյանց հետ յուրաքանչյուր ծրագիրը իրականացնելուց առաջ: Ծրագիրը կներառի գործողությունների ժամկետներն ու պայմանները, ինչպես նաև վճարման ժամանակացույցը և պայմանները:

ե) Գործողությունները իրականացնելիս Կողմերը հնարավորության սահմաններում պետք է առաջնորդվեն ինքնածախսածածկման գաղափարով:

Հոդված 4
Այլ հաստատությունների և կազմակերպությունների մասնակցություն

ա) Սույն Փոխըմբռնման հուշագիրը իրագործելիս Կողմերը կխրախուսեն այլ հաստատությունների, կազմակերպությունների, գիտական և մասնավոր ոլորտների, կառավարական այլ մարմինների մասնակցությունը:

բ) Կողմերը հնարավորություններ կփնտրեն տեխնիկական համագործակցության զարգացման և ուսուցման ծրագրերի իրականացման հետ կապված ծախսերի որոշ կամ ամբողջ մասը ֆինանսավորելու համար՝ հեղինակավոր մարմինների (ինչպիսին են Համաշխարհային բանկը և Վերակառուցման ու զարգացման եվրոպական բանկը) և հիմնավորված առաջարկությունների ներկայացման միջոցով:

Հոդված 5
Խորհրդատվություն

ա) Սույն Փոխըմբռնման հուշագրի մեկնաբանման կամ կիրարկման հետ կապված որևէ տարաձայնություն կլուծվի Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

բ) Սույն Փոխըմբռնման հուշագրի մեկնաբանման կամ կիրարկման հետ կապված որևէ տարաձայնություն կլուծվի Կողմերի նշանակած պատասխանատու պաշտոնյաների կամ լիազորված անձանց փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 6
Միջազգային օրենսդրություն

Սույն Փոխըմբռնման հուշագիրը նպատակ չի հետապնդում միջազգային օրենսդրությամբ նախատեսված որևէ պարտավորության ստանձնում:

Հոդված 7
Ուժի մեջ մտնելը, ժամկետները և դադարեցումը

Սույն Փոխըմբռնման հուշագիրը ուժի մեջ կմտնի ստորագրման պահից և կգործի անորոշ ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած ժամանակ կասեցնել սույն Փոխըմբռնման հուշագրի գործողությունը, հատուկ ծրագրերը կամ համաձայնագրերը մյուս Կողմին 60 օր առաջ գրավոր ծանուցում ուղարկելուց հետո:

Հոդված 8
Փոփոխություններ

Սույն Փոխըմբռնման հուշագիրը և նրանից բխող ծրագրերը կարող են փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և ձևակերպվեն գրավոր՝ նշելով այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետները:

Կատարված է Երևան քաղաքում 1999 թվականի ապրիլի 7-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, անգլերեն և ֆրանսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտել 1999 թվականի ապրիլի 7-ից: